ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 77
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
30-ը նոյեմբերի 2024թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 25-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2024թ. ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում):
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան** /
2. ԵՊՀ ԻՄ 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան** /
3. ԵՊՀ ԻՄ արտաքին շահակիցների 2023-2024թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ:
   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ **Լ. Բեգինյան**/
4. Կիրառական արվեստի ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ Վ. Ա. Աղաբաբյան)
5. Բնական գիտությունների ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ Ա. Ց. Դավթյան)
6. Ընթացիկ հարցեր։
   6.1. ԵՊՀ ԻՄ կառուցվածքային փոփոխությունների մասին։
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան** /

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2024թ. ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում)» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Ա. Մակարյանը մանրամասն ներկայացրեց ըստ կրթական ծրագրերի՝ ԵՊՀ ԻՄ 2024 թ. ընդունելության արդյունքները (առկա և հեռակա ուսուցում) և նախորդ երեք ուստարիների արդյունքների համեմատական վերլուծությունը (տես հավելված 1)։ Մասնավորապես նշվեց, որ 2024-2025 ուստարում նկատելի է ընդունելության քննությունների նվազագույն շեմը հաղթահարած դիմորդների թվի որոշակի նվազում հեռակա ուսուցման համակարգում՝ նախորդ երեք ուստարիների (2021-2022, 2022-2023, 2023-2024) համեմատությամբ, չնայած այն հանգամանքին, որ դիմորդների թիվը էականորեն չի նվազել: Շարունակվում է խորանալ դպրոցների շրջանավարտների գիտելիքների և ընդունելության քննությունների համար նախատեսված պահանջների միջև տարբերությունը, իջնում է դիմորդների գիտելիքների մակարդակը, ըստ այդմ՝ առավել մեծ թվով դիմորդներ չեն հաղթահարում նվազագույն շեմը:

Ա. Մակարյանը նշեց, որ չնայած այս ամենին նախորդ ուստարվա հետ համեմատած՝ 2024-2025 ուսումնական տարում ունենք դիմորդների ընդհանուր թվի աճ: Այս ուստարում ընդունվել է 255 դիմորդ (նախորդ ուստարվա 236-ի փոխարեն), որից առկա ուսուցման բակալավրիատ ընդունվել է 182-ը (նախորդ ուստարվա 161-ի փոխարեն), հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 23-ը (32-ի փոխարեն), հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 26-ը (32-ի փոխարեն), ՄՄՈՒՀ-երից տեղափոխված՝ 24-ը (11-ի փոխարեն):

Վերջին տարիներին նվազել է Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գրագիտություն)» մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցմամբ դիմորդների և ընդունվողների թիվը, չնայած այն հանգամանքին, որ ամենաշատ անվճար տեղերը հատկացվում են այստեղ, փորձում ենք ներդնել նոր մասնագիտություն:

Ֆինանսներ (ըստ ոլորտի) մասնագիտությամբ ընդունվողների քանակն ունի աճի դինամիկա՝ այստեղ ունենք ընդունված 35 սովորող, Զբոսաշրջություն մասանագիտությամբ ունենք մեծաքանակ դիմորդներ, բայց քիչ թվով ընդունվողներ:

Վատ վիճակ է Պատմություն, Հայոց լեզու և գրականություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն /9 ընդունված/, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Հոգեբանություն մասնագիտություններով՝ դիմորդների քանակը քիչ է: Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ դիմորդների քանակը կայուն է, գնալով մեծանում է՝ այս տարի ընդունվել են 28 սովորող, Ռուսաց լեզու և գրականություն մասնագիտությամբ ընդունվողների քանակը անցած տարվա համեմատ մի փոքր աճել է՝ ունենք 13 դիմորդ և 11 ընդունված սովորող: Դրական դինամիկա է դիտվում նաև Կիրառական արվեստի ֆակուլտետում իրականացվող մասնագիտություններով ընդունելության մեջ: Ա. Մակարյանը կարևորեց նաև այն հանգամանքը, որ Ռուսաց լեզու և գրականություն մասնագիտությամբ շրջանավարտների մեծ մասն արդեն աշխատում են:

Նշվեց, որ ընդունելությանն ավելի մեծ վնաս են հասցնում նաև ոչ պետական բուհերի հետ անհավասար և անազնիվ մրցակցային պայմանները, որոնք իրականացնում են առանց քննությունների ընդունելություն՝ դրանով գրավելով մեծաքանակ դիմորդներ:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը և այլք: Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ առավել մտահոգիչ խնդիր է հարուցում Եվրոպական համալսարանի ընդունելության կազմակերպումը հարցազրույցով՝ առանց քննության, դրանով գրավելով մեծաքանակ դիմորդներ: Արտահայտվողները նշեցին, որ պետք է միասնական լուրջ աշխատանք տարվի դիմորդների և ընդունվողների քանակն էապես ավելացնելու վրա:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը «Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2024թ.-ի ընդունելության արդյունքների մասին (առկա և հեռակա ուսուցում)» հարցի կապակցությամբ ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը նշեց, որ վերջինիս հոդվածների ցուցանիշները կազմվել են 2024 թ. նախահաշվի կատարողականի ցուցանիշների, ինչպես նաև կանխատեսումների և պլանավորման հիման վրա: Նոր բյուջեով նախատեսվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձի 10% բարձրացում, աշխատակիցների առողջության ապահովագրության փաթեթով նախատեսվող ծառայությունների բարելավում, Բնական գիտությունների և Կիրառական արվեստի

ֆակուլտետների մասնաշենքի վերանորոգման պետական սուբվենցիոն ծրագրին մասնակցություն, կենտրոնական մասնաշենքի ջեռուցման համակարգի արմատական վերափոխում և բակային տարածքի հիմնանորոգում: Նշված ծրագրերի իրականացմանը ֆինանսական աջակցություն կցուցաբերի նաև Մայր բուհը (տես հավելված 2):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը և այլք: Մասնավորապես նշվեց, որ նախորդ տարվա համեմատ բարձրացել է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձային ֆոնդը, ապահովագրական փաթեթը այս տարի կլինի Մայր բուհի հետ միասին:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 77/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 15-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծին՝ համաձայն հավելվածի 2-ի:
2 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը ներկայացնել ԵՊՀ հաստատման:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ արտաքին շահակիցների 2023-2024թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ. Բեգինյանի հաղորդումը:

Լ. Բեգինյանը նշեց, որ ուսումնասիրությունն իրականացվել է Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի կողմից՝ առցանց հարցման միջոցով: Հարցվող ընտրահատվածի մեջ ընդգրկված են մարզի գործատու կազմակերպությունների՝ բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները:

Լ. Բեգինյանը նշեց, որ ընդհանուր առմամբ հարցման արդյունքները գոհացուցիչ են, ինչը փաստում է, որ ԵՊՀ ԻՄ-ը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է՝ աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ: Ըստ հարցման արդյունքների՝ ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը 4 և 5 է գնահատել 67 շահակիցներից 60-ը (89.55%-ը), գործնական հմտությունները և մասնագիտական խոսքը՝ 54-ը (80.59%-ը), որը բարձր ցուցանիշ է: Մեր շրջանավարտների հաղորդակցման հմտությունները 67 գործատուներից 58-ը (86.56%-ը) գնահատել է 4 և 5 գնահատականներով, իսկ 53-ի (79.10%-ը) կարծիքով՝ մեր շրջանավարտները կարողանում են արագ և ճիշտ կողմնորոշվել տարբեր գործնական իրավիճակներում: Մեր շրջանավարտների աշխատանքային կարգապահությունը 67 գործատուներից 64-ը (95.52%-ը) գնահատել է 4 և 5 գնահատականներով, իսկ 60-ը (89.55%-ը) կարծում են, որ մեր շրջանավարտներն ունեն թիմային աշխատանք կատարելու ունակություն: Մեր շրջանավարտների տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները 67 գործատուներից 56-ը (83.58%-ը) դարձյալ գնահատել է 4 և 5 գնահատականներով և այլն: Հարցման ընթացքում ուսումնասիրվել է նաև մասնաճյուղի հեղինակությունը կազմակերպությունում և բնակավայրում: 67 գործատուներից 63-ը (94.03%-ը) մասնաճյուղի հեղինակությունը 4 և 5 է գնահատել իրենց կազմակերպությունում, իսկ 61-ը (91.04%-ը)՝ իրենց բնակավայրում: Այն հարցին, թե խորհուրդ կտան մեր շահակիցներն իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ, դրական է

պատասխանել հարցման մասնակիցներից 65-ը (97.01%-ը): Այս ցուցանիշը բավականին բարձր է և վկայում է, որ տարածաշրջանում բարձր է կարծիքը մասնաճյուղի կրթական գործունեության մասին:

Այնուհետև Լ. Բեգինյանը ներկայացրեց շրջանավարտների ուսուցումը բարելավելու վերաբերյալ առաջարկությունները և հավելեց, որ հարցման արդյունքները կտրամադրվի մասնագիտական ամբիոններին և ուսանողներին (ՈՒԳԸ և ՈՒԽ)՝ քննության առարկա դարձնելու կրթական ծրագրերի կատարելագործմանն ուղղված ներկա գործընթացներում արտաքին շահակիցների կարծիք-գնահատականներն ու առաջարկությունները:ը: Լ. Բեգինյանի ամբողջական հաղորդումը կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը և այլք:

Արտահայտվողները կարևորեցին Մասնաճյուղի աշխատակիցների տարածաշրջանի դպրոցներ այցերը՝ կազմակերպված ՊԿԾՀ բաժնի կողմից, դրանց արդյունավետությունը և արդյունավետության բարձրացմանը միտված քայլերը: Կարևորեցին նաև այն հանգամանքը, որ բարձր են արտաքին շահակիցների կողմից ԵՊՀ ԻՄ-ին տրված գնահատականը, իսկ վերլուծությունը պետք է ուղարկել ուսումնական ստորաբաժանումներին վերլուծելու և կատարվող աշխատանքը աշխատաշուկայի պահանջներին առավել համահունչ դարձնելու համար:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ արտաքին շահակիցների 2023-2024թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ» հարցի վերաբերյալ ՊԿԾՀ բաժնի վարիչ Լ. Բեգինյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի չորրորդ՝ «Կիրառական արվեստի ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանի հաղորդումը:

Նա նշեց, որ Կիրառական արվեստի ֆակուլտետն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերով: Ֆակուլտետն իր գործունեությամբ խթանում է դիզայնի, ժողովրդական հին և նոր արհեստների պահպանումը, զարգացումը և տարածումը: Վերջին տարիներին մեծ աշխատանքներ են տարվում գործվածքի, մետաղների, փայտի գեղարվեստական մշակման, խեցեգործության, ապակենկարչության, զարդարվեստի, քանդակի, ինտերիերի և էքստերիերի ուղղություններով: Ֆակուլտետում կրթություն է ստանում 85 ուսանող: «Գծանկարի, գունանկարի և քանդակի» և «Դեկորատիվ կիրառական արվեստ և դիզայն» ամբիոններում դասավանդում են 1 պրոֆեսոր, 3 դոցենտ, 7 ասիստենտ, 9 դասախոս: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում կրթություն իրականացվել է միայն բակալավրիական մակարդակում: Վ. Աղաբաբյանը նշեց, որ ֆակուլտետի կրթական ծրագրերը ներկայացնելու նպատակով կազմակերպել են այցեր Տավուշի և Գեղարքունիքի մարզերի դպրոցներ: Հանդիպումներ են իրականացվել նաև Կողբի, Դիլիջանի, Իջևանի արվեստի դպրոցներում: Ֆակուլտետը պարբերաբար կազմակերպել է «Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր՝ ֆակուլտետի կրթական հնարավորությունները ներկայացնելու համար: Մեզ հյուր են եկել Իջևանի ավագ, թիվ 5, թիվ 3, Աչաջրի միջնակարգ դպրոցի աշակերտները: Ֆակուլտետը 2024 թվականի մայիսի 16-ին՝ համալսարանի

հիմնադրման 105-ամյակի օրը կազմակերպված «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ին ներկայացավ դասախոսների և ուսանողների ավելի քան չորս տասնյակ աշխատանքներով, 2024 թվականի հուլիսի 19-ին «Մենք ենք, մեր սարերը» փառատոնի շրջանակներում Իջևանի Շատրվանների այգում կազմակերպվել է գեղեցիկ ցուցադրություն: 2024 թվականի օգոստոսի 23-ին Իջևանի «Վերնատուն» պատկերասրահում տեղի ունեցավ «Երիտասարդներն ընդդեմ կոռուպցիայի» ցուցահանդեսը և «Վիզուալացնելով կոռուպցիան» գրքույկի շնորհանդեսը, որին մասնակցում էին Շիրակի և Տավուշի մարզերում բնակվող 14-24 տարեկան շուրջ 40 արվեստասեր երիտասարդները՝ թեմատիկ ավելի քան 50 աշխատանքներով: Մրցույթի մասնակիցների շարքում մեծ թիվ էին կազմում Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները: ԴԿԱ 4-րդ կուրսի ուսանող Էրիկ Ամյանը ճանաչվեց մրցույթի հաղթող:

Նշվեց, որ ֆակուլտետում մեծ ուշադրություն է դարձվում պրակտիկաներին: Փորձ է արվում պրակտիկան մոտեցնել արտադրությանը: Հաշվետու ժամանակահատվածում պրակտիկայի շրջանակներում իրականացվել են խեցեգործության, ապակենկարչության, ոչ հենքային գոբելենի, համակարգչային գրաֆիկայի և եռաչափ մոդելավորման, հագուստի մոդելավորման և նախագծման պրակտիկաներ: Ֆակուլտետում հաճախակի են կազմակերպվում վարպետաց դասեր և պլեներներ:

Հաշվետու ժամանանակահատվածում Դեկորատիվ-կիրառական արվեստ կրթական ծրագրի ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ կարևորվել է դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերի տարածաշրջանային և ազգային ավանդույթները: Դիզայն կրթական ծրագրի ավարտական աշխատանքների զգալի մասը ներառել են մարզի տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների ինտերիերի և էքստերիերի մշակումն ու արդիականությունը: Մասնավորապես՝

Ն. Վարդանյան- Սարիգյուղ համայնքի մշակույթի տան ինտերիերի և էքստերիերի դիզայն:

Ա. Մարտիրոսյան- Սևքար համայնքի երաժշտական դպրոցի ինտերիերի և էքստերիերի դիզայն:

Մ. Մելիքյան- Գրաֆիկական դիզայն «Հյուրանոցի գովազդային փաթեթ» /Աճարկուտ գյուղի տուրիստական ուղղությունների ոճավորում/:

Շ. Սահակյան- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գլխավոր մասնաշենքի էքստերիերի և բակի ձևավորում:

Կ. Հովակիմյան- Չգործող ճոպանուղու կայանի՝ սրճարանի վերակառուցման նախագիծ:

Հաշվետու ժամանակահատվածում՝ հիմնովի վերանորոգվել են խեցեգործության, քանդակի, մետաղի գեղարվեստական մշակման, փայտի գեղարվեստական մշակման արվեստանոցները, թարմացվել է համակարգչային սրահի համակարգիչները՝ ապահովելով անհրաժեշտ ծրագրային հագեցվածությամբ, փոխարինվել է տեսածրիչը, թարմացվել է արվեստանոցների գույքը, ձեռք է բերվել անհրաժեշտ քանակի նոր նկարակալներ, դիդակտիկ նյութեր, շրջանակներ, նկարչական պարագաներ, խեցեգործության դասընթացի իրականացման համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ, վերանորոգվել է թրծման վառարանը, գնվել է դուրգ: Այնուհետև Վ. Աղաբաբյանը մանրամասնեց 2023-2024 ուստարում ֆակուլտետի հաջողությունները և դժվարությունները: (Հաշվետվությունը ամբողջությամբ տես հավելված 4-ում):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը և այլք:

Արտահայտվողները բավարար գնահատեցին կատարված աշխատանքը: Կարևորեցին վերջին տարիներին դիմորդների թվի աճը, ուսանողների մոտիվացիայի բարձրացումը, որի

վկայությունն է նրանց՝ Մասնաճյուղի արվեստանոցներում երկար մնալը և աշխատելը, ինչպես նաև համայքներում ներդրվող ավարտական աշխատանքների և կազմակերպվող ցուցահանդեսների և այլ մասնագիտական միջոցառումների թվի աճը։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 77/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Վահան Աղաբաբյանի 2023-2024 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Վահան Աղաբաբյանի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն։

Օրակարգի հինգերորդ «Բնական գիտությունների ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026 ռազմավարական ծրագրի» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պարտականությունները կատարող Ա. Ց. Դավթյանի զեկույցը:

Ա. Դավթյանը նշեց, որ հաշվետու 2023-2024 ուստարում բնական գիտությունների ֆակուլտետն իր գործունեությունն իրականացրել է Մասնաճյուղի 2022-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանին համաձայն՝ իր աշխատանքային պլանում ամրագրելով այն գործողությունները, որոնք պլանավորվել են ֆակուլտետների, նաև ամբիոնների կողմից իրականացման համար։ Ֆակուլտետն իր գործողությունների պլանի շրջանակներում իրականացնում է գործընթացներ, որոնք ուղղորդված են բարելավելու ուսումնական գործընթացի կազմակերպումը, նյութատեխնիկական բազան, դասախոսական կազմը և ստեղծելու կրթական անհրաժեշտ միջավայր, նպաստելու դիմորդների թվի աճին և իր շրջանավարտների ապագա կարիերայի ձևավորմանը։ 2023-2024 ուստարում ԵՊՀ ԻՄ-ում բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրով դիմել է 25 դիմորդ, որոնցից ընդունելության շեմը հաղթահարել են 18-ը (72%-ը), որոնցից 8-ը ընդունվել է անվճար, 10-ը՝ վճարովի համակարգ։ Անվճար ուսուցմամբ համակարգ ընդունված դիմորդների համար ընդունելության գնահատականի շեմը կազմել է 20.25 միավոր (նախորդ ուստարում այն եղել է 29.5 միավոր), վճարովի ուսուցմամբ համակարգ ընդունված դիմորդների ընդունելության գնահատականի շեմը եղել է 16.25 միավորը։ Ծրագիրը հաջողված է նրանով, որ ունի դիմորդների կայուն թիվ. միջինում 25-35 դիմորդ, և ընդունվողների կայուն թիվ՝ 20-25։

Նշվեց, որ հաշվետու ուստարում դիմորդների թիվը նվազել էր նախորդ ուստարվա համեմատ։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դիմորդների թվի նվազումը պայմանավորված է դեպի Երևան դպրոցների շրջանավատների մեծ հոսքով, որոնց մեծ մասը նախընտրել է տեխնիկական կրթությունը՝ պայմանավորված արդի գիտատեխնիկական առաջընթացով և տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառությամբ և պահանջվածությամբ։

2023-2024 ուստարվա ընթացքում ՊԿՇՀ բաժնի կողմից Աչաջրի, Խաշթառակի, Հովքի, Այգեհովիտի միջն. դպրոցների և Իջևանի Պ.Տեվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի

շրջանավարտների համար կազմակերպվել են ճանաչողական այցեր, որոնց ընթացքում մասնակիցները ծանոթացել են մասնաճյուղի կառուցվածքին, ֆակուլտետների հնարավորություններին, առանձնահատկություններին, կրթական ծրագրերին, հանդիպումներ ունեցել դեկանների, ամբիոնի վարիչների և կրթական ծրագրերի ղեկավարների հետ, քննարկել կրթական ծրագրերի առանձնահատկությունները, աշխատաշուկայի պահանջները, մասնաճյուղի շրջանավարտների հնարավորությունները, լսել դասախոսություններ նախընտրած դասընթացներից: Մասնավորապես, այցելած աշակերտները ծանոթացել են բնական գիտությունների ֆակուլտետում իրականացվող «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրին, տեխնիկապես վերազինված լսարանների հնարավորություններին, գրադարանին, ուսանողական առօրյային, իրազեկվել ընդունելության պայմաններին: Աշակերտները ֆակուլտետում մասնակցել են նաև իրականացվող մասնագիտական դասերին, ինչը ապագա ուսանողների համար հնարավորություն էր հասկանալու դպրոցում և համալսարանում կրթության կազմակերպման տարբերություններին ու առանձնահատկություններին: Ֆակուլտետի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դասախոսները՝ Մ.Զաքարյանը, Կ.Հովսեփյանը և Ա,Մարգարյանը ՊԿՇՀ բաժնի ներկայացուցիչների հետ այցելել են Տավուշի մարզի և Գեղարքունիքի մարզի միջնակարգ դպրոցներ և կարդացել են դասախոսություններ ուսուցիչների կողմից նախապես ճշտված թեմաներով:

2023-2024 ուստարում ֆակուլտետի ԻԿՄ կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի համար ուսման առաջադիմության միջինը կազմել է **59.9%** (նախորդ ուստարում՝ 64.53%), իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ **16.7%:**

Ուսման առաջադիմության արդյունքները ֆակուլտետի համար բարձր չեն, սակայն ցուցանիշի բարելավման համար կրթական ծրագիրը պարբերաբար վերանայվում է, որոնց ժամանակ մասնագիտական դասընթացների համար ավելացվել են գործնական դասընթացների ժամաքանակները, դասընթացների բովանդակությունը ուղղորդվել է պրակտիկ գիտելիքների և կարողությունների ձևավորմանը:

Ֆակուլտետը 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում ունեցել է գերազանց առաջադիմությամբ 17 ուսանողներ, (նախորդ ուստարվա 1-ին կիսամյակում՝ 17, 2-րդ կիսամյակում՝ 21 գերազանցիկներ), որը ֆակուլտետի համար նոր և կարևոր ցուցանիշ է:

Հաշվետու ուստարում Ֆակուլտետի 81 ուսանողներից կրաթաթոշակ են ստացել 21-ը, իսկ յոթ ուսանող արժանացել են անվանական կրթաթոշակի, որոնցից մեկը հաշվետու ուստարում դարձել է տարվա լավագույն ուսանողը մասնաճյուղում:

Ուսման առաջադիմության բարձրացման վրա իրենց ազդեցությունն են ունեցել իրականացված մասնագիտական պրակտիկաները, որոնց ծրագրերը վերանայվել են և ուղղորդվել մասնագիտական կարողությունների զարգացմանը, նաև ընդլայնվել է պրակտիկաների իրականացման վայրերի ցանկը՝ ներառելով մարզում գործող գրեթե բոլոր ծրագրավորման ընկերությունները (Իջևան քաղաքում գործում են 5 ընկերություններ): Հաշվետու ուստարում պրակտիկաների մի մասը իրականացվել է նաև ֆակուլտետում նոր բացված «Թվային Հայք» լաբորատորիայում (Իջևանում թվային անվտանգության կրթական և արձագանքման կենտրոն):

Նշենք, որ վերջին տարիներին ֆակուլտետի ուսանողների մի մասը ուսմանը զուգահեռ որպես ծրագրավորող աշխատում է մարզի ծրագրավորման ընկերություններում՝ «LT Coding» ՍՊԸ, «Zurabyan's» ՍՊԸ, «Digital Wave» ընկերություն, «Էլմասիս» ՍՊԸ և այլն, նաև աշխատում են մարզում գործող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում որպես խմբավարներ: 2024թ. «Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/» մասնագիտության 17 շրջանավարտներից 13-ը աշխատում էր մասնագիտությամբ:

Ա. Դավթյանը նշեց, որ ուսման առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ ֆակուլտետը ամբիոնների հետ միասին պետք է մշակի գործողությունների պլան-ժամանակացույց, որը կներառի կոնկրետ գործնական դասընթացներ, խորհրդատվական

հանդիպումներ, պրակտիկ և ինքնուրույն աշխատանքների և առաջադրանքների իրականացումներ և այլն։ Այս գործընթացում պետք է ներգրավել նաև ֆակուլտետի բարձր առաջադիմությամբ ուսանողներին, իսկ գործընթացը պետք է իրականացնել խիստ վերահսկողությամբ և պատասխանատվությամբ։

Այնուհետև Ա. Դավթյանը անդրադարձավ ձեռքբերումներին և դժվարություններին նշեց, որ Ֆակուլտետի գործունեությունն ակտիվացնելու, բարելավելու և նոր ձեռքբերումներ ունենալու համար պետք է օգտվել մի շարք հնարավորություններից.

- ակտիվ համագործակցել ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի հետ, կազմակերպել ուսանողների փոխադարձ այցեր, ստեղծել հնարավորություններ տեղում տարբեր դասաժամերին մասնակցելու համար,
- ակտիվացնել ԻԿՄ կրթական ծրագրի գովազդը՝ մասնաճյուղի ՈՒՄԿ համապատասխան բաժնի կողմից կազմակերպվող միջոցառումների միջոցով դիմորդներ ներգրավելու և դրանց քանակն ավելացնելու համար,
- ակտիվ համագործակցել արտաքին շահակիցների հետ, ներգրավել կրթական ծրագրի վերանայման աշխատանքներում, հաշվի առնել նրանց առաջարկները ծրագրի տարբեր բաղադրիչների բովանդակային կառուցվածքի, դրանց գործնականում կիրառելիության վերաբերյալ,
- տարածաշրջանի առաջատար ծրագրավորողներին ներգրավել ծրագրի իրականացման գործընթացում,
- համագործակցության շրջանակներում օգտագործել շահակիցների ռեսուրսներն ու հնարավորությունները մասնագիտական պրակտիկաների արդյունավետ իրականացման համար,
- իրականացնել աշխատանքներ ուսանողների մոտիվացիայի բարձրացման համար,
- պարբերաբար կատարել արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություն՝ ծրագիրը նրանց պահանջմունքների բավարարմանը ուղղորդելու համար,
- ծրագրի շրջանավարտներին ներգրավել ուսանողների հետ տարվող մասնագիտական և խորհրդատվական աշխատանքներում, օգտագործել կարիերայում նրանց ունեցած հաջողությունները՝ ուսանողների մոտ մասնագիտության և ֆակուլտետում ստացած կրթության նկատմամբ վստահություն ձևավորելու համար,
- անգլերեն լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու համար ներդնել օտարալեզու (անգլերեն, ռուսերեն) դասընթացներ կամ դասաժամերին օտար լեզվով նյութի մատուցման հնարավորություններ

Ա. Դավթյանի ամբողջական հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 5-ում։

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ն. Գրիգորյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը և այլք։

Արտահայտվողները բավարար գնահատեցին կատարված աշխատանքը։ Կարևորեցին դիմորդների թվի աճին և ուսանողների կրթության որակի բարելավմանն ուղղված քայլերը։ Մասնավորապես ԵՊՀ ԻՄ-ում կազմակերպվող ներքին դրամաշնորհային ծրագրերում, արտաքին դրամաշնորհային ծրագրերում իրականացվող հետազոտական աշխատանքներում ուսանողներին ընդգրկելու միջոցով նրանց մոտիվացիայի բարձրացմանը միտված գործունեությունը։ Կարևորվեց նաև ՊԿՇՀ բաժնի հետ համագործակցությամբ դպրոցներում և Մասնաճյուղում տարվող աշխատանքները։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին.

ՈՐՈՇՈՒՄ 77/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 11-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Մանվել Զաքարյանի 2023-2024 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պարտականությունները կատարող, Ա. Ց. Դավթյանի 2023-2024 ուստարվա հաշվետվությունն ըստ ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն։

Ընթացիկ հարցեր՝

6.1 Լսեցին՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառուցվածքային փոփոխությունների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը։

Ա. Մակարյանը առաջարկեց կատարել օպտիմալացում ԵՊՀ ԻՄ կառուցվածքում՝ վարչական 4 բաժինների հիման վրա ձևավորել 2 բաժին։ Մասնավորապես առաջարկվեց՝ Գնումների, մատակարարման և պահեստավորման բաժինը միավորել Հաշվապահության հետ՝ ձևավորելով Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժին, Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը միավորել Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի հետ՝ ձևավորելով Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին։

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար Մ. Աթոյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ն. Գրիգորյանը և այլք։ Արտահայտվողները հավանություն տվեցին առաջարկված կառուցվածքային փոփոխություններին և առաջարկեցին համապատասխան առաջարկություն ներկայացնել ԵՊՀ ռեկտորին։

ՈՐՈՇՈՒՄ 77/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 2-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժինը,
2. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի Հաշվապահությունը,
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնի և Հաշվապահության հենքի վրա ստեղծել «Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժին»։
4. Համապատասխան առաջարկ ներկայացնել ԵՊՀ ռեկտորին։

ՈՐՈՇՈՒՄ 77/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 2-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը,
2. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը,
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի և կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի հենքի վրա ստեղծել «Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին»,
4. Համապատասխան առաջարկ ներկայացնել ԵՊՀ ռեկտորին։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ